ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 30

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքը (Սվարանց բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Տաթև համայնքի Սվարանց բնակավայրի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքը (Սվարանց բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Սյունիք-7 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը:*

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
09-085-0101-0001 կադաստրային ծածկագրով 2.36771 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող, 09-085-0001-0001 կադաստրային ծածկագրով 1.04236 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող, 09-085-0001-0004 կադաստրային ծածկագրով 0.02559 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք	09-085-0101-0001 կադաստրային ծածկագրով 2.36771 հա մակերեսով, 09-085-0001-0001 կադաստրային ծածկագրով 1.04236 հա մակերեսով, 09-085-0001-0004 կադաստրային ծածկագրով 0.02559 հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողեր

1. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

2. Անհրաժեշտ է հետագա գործառույթներն իրականացնել ապահովելով ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գրությամբ ներկայացված պահանջը (կցվում է):

3. Տաթև համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Սվարանց բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի (Սվարանց բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի աշխատանքային պարտականությունները կատարող		
		Լ. Սարգսյան

Երևան, «27» «հունվարի» 2025 թ.